ՀՀ ֆինանսների նախարարություն

2022 ԹՎԱԿԱՆԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Թարմացվել է 16.12.2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 • **Ընդհանուր նկարագրություն**

2 • **Համախառն ֆինանսական կարիքն ու պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները**

3 • **Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման պարտքային գործիքակազմը**

3.1 • **Պակասուրդի ֆինանսավորումը պետական գանձապետական պարտատոմսերով** *(թողարկման, տեղաբաշխման ու հետգնման հիմնական սկզբունքներ ու 2022 թվականի տեղաբաշխման աճուրդների օրացույց)*

3.2 • **Պակասուրդի ֆինանսավորումն արտաքին վարկերով** *(մասհանումների ծրագիր)*

3.3 • **Պակասուրդի ֆինանսավորումը կապիտալի միջազգային շուկաներից ներգրավված փոխառություններով** *(եվրապարտատոմսերի տեղաբաշխումներ ու մարումներ)*

4 • **Կառավարության պարտքի մարումն ու սպասարկումը**

5 • **Կառավարության պարտքը 2022 թվականի տարեվերջին**

1. Ընդհանուր նկարագրություն

Փոխառությունների տարեկան ծրագրում ներկայացված են փոխառու միջոցների հաշվին ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման ծավալները և կառուցվածքը, 2022 թվականի ընթացքում ՀՀ կառավարության պարտքի մարման և սպասարկման նկարագիրը, ինչպես նաև 2022 թվականի տարեվերջի դրությամբ կառավարության պարտքը և այն բնութագրող ցուցանիշները:

2022 թվականի փոխառությունների տարեկան ծրագիրը մշակվել է կառավարության պարտքի կառավարման 2022-2024 թվականների ռազմավարական ծրագրի նպատակադրումներին, ուղենշային ցուցանիշներին և ՀՀ կառավարության պարտքի նվազեցման 2022-2026 թվականների ծրագրին համապատասխան, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի կազմման համար կիրառված մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակները:

ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի հիմքում դրված հիմնական ցուցանիշները.

Ցուցանիշներ	2022թ. (պետբյուջե)
ՀՆԱ, մլրդ դրամ	7,869.4
Իրական աճ, %	7.0
ՀՆԱ-ի դեֆլյատոր, %	4.6
Պետական բյուջեի եկամուտներ, մլրդ դրամ	1,947.8
%-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	*24.8*
Պետական բյուջեի ծախսեր, մլրդ դրամ	2,184.0
%-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	*27.8*
Պետական բյուջեի պակասուրդ, մլրդ դրամ	(236.3)
%-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	*(3.0)*
Բյուջետային մուտքերի և ելքերի փոխարկման համար կիրառված ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ փոխարժեք	477.45

2. Համախառն ֆինանսական կարիքն ու պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները

ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի հիմքում դրված հարկաբյուջետային շրջանակի համաձայն՝ համախառն ֆինանսական կարիքը կկազմի 650.2 մլրդ դրամ, մասնավորապես.



Նախատեսվում է համախառն ֆինանսական կարիքի 64.6 տոկոսն ապահովել ներքին աղբյուրներից ներգրավված փոխառու միջոցների հաշվին, իսկ 35.4 տոկոսը՝ արտաքին փոխառությունների հաշվին: Կանխատեսվում է, որ պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումից մուտքը կկազմի 420.2 մլրդ դրամ, և արտաքին աղբյուրներից ներգրավված վարկերի գծով կիրականացվի 230.0 մլրդ դրամի ֆինանսավորում:

ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի պակասուրդը կկազմի 236.3 մլրդ դրամ և նախատեսվում է այն ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորել 272.2 մլրդ դրամով, իսկ արտաքին աղբյուրների հաշվին՝ (36.0) մլրդ դրամով:

Պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներն են.

Ֆինանսավորման աղբյուրներ, մլրդ դրամ	2022թ. (պետբյուջե)
Ընդամենը	**236.3**
այդ թվում՝	
Ներքին աղբյուրներ	**272.2**
որից	
Փոխառու զուտ միջոցներ	**250.2**
գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումից մուտքեր	420.2
գանձապետական պարտատոմսերի մարում / հետգնում	(170.0)
մուրհակների մարում	(0.02)
Ֆինանսական զուտ ակտիվներ	**22.0**
վարկերի և փոխատվությունների տրամադրում (զուտ)	(38.5)
ելքերի ֆինանսավորմանն ուղղվող << 2022 թվականի պետական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցներ	-
կայունացման դեպոզիտային հաշվից օգտագործում	60.5
այլ	-
Արտաքին աղբյուրներ	**(36.0)**
որից	
Փոխառու զուտ միջոցներ	**108.5**
վարկերի և փոխատվությունների ստացում	230.0
նպատակային վարկերի գծով	134.5
բյուջետային աջակցության վարկերի գծով	95.5
ստացված վարկերի և փոխատվությունների մարում	(121.5)
արտարժութային պարտատոմսերի տեղաբաշխումից մուտքեր	-
արտարժութային պարտատոմսերի մարում / հետգնում	-
Ֆինանսական զուտ ակտիվներ	**(144.5)**
վարկերի և փոխատվությունների տրամադրում (զուտ)	(143.6)
բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերում	(0.9)

3. Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման պարտքային գործիքակազմը

2022 թվականին պետական բյուջեի պակասուրդի զուտ ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին կկազմի 356.5 մլրդ դրամ, ինչը կիրականացվի պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին՝ 250.2 մլրդ դրամ և արտաքին վարկերի հաշվին՝ 106.3 մլրդ դրամ (հաշվի առնելով կատարվելիք մասհանումների և մայր գումարի մարումների տարբերությունը)[1]: Արտարժութային պետական պարտատոմսերի հաշվին ֆինանսավորում չի նախատեսվել:

[1] Արտաքին վարկերի գծով պակասուրդի ֆինանսավորման և արտաքին վարկերից մասհանումների տարբերությունը պայմանավորված է համապատասխան վարկային ծրագրերի շրջանակներում բացված հատուկ հաշիվներում առկա դրամական միջոցների մնացորդներով:

3.1. Պակասուրդի ֆինանսավորումը պետական գանձապետական պարտատոմսերով

(թողարկման, տեղաբաշխման ու հետգնման հիմնական սկզբունքներ և 2022 թվականի տեղաբաշխման աճուրդների օրացույց)

Պետական գանձապետական պարտատոմսերով բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումն իրականացվելու է կարճաժամկետ (1 տարի), միջնաժամկետ (3 և 5 տարի), երկարաժամկետ (10 և 30 տարի) պարտատոմսերի վերաբացումների և խնայողական (6 ամիս, 1, 2 և 3 տարի) պարտատոմսերի տեղաբաշխման միջոցով:

Յուրաքանչյուր երկու ամիսն առնվազն մեկ անգամ կկազմակերպվի 52, 39, 26 և 13 շաբաթ մինչև մարման ժամկետ ունեցող պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդներ: 6 ամիս մարման ժամկետ ունեցող պետական կարճաժամկետ պարտատոմսերն ուղենշային սահմանելու նպատակով մինչև մարում 52 և 39 շաբաթ ժամկետով պարտատոմսերի տեղաբաշխման ենթակա ծավալը կլինի նվազագույնը 3 մլրդ դրամ:

2022 թվականի ապրիլի 29-ին կթողարկվեն 3, 5 և 30 տարի մարման ժամկետայնությամբ նոր միջնաժամկետ և երկարաժամկետ պետական գանձապետական պարտատոմսեր: 2022 թվականի ընթացքում կտեղաբաշխվեն 2031 թվականի հոկտեմբերի 29-ին մարման ենթակա երկարաժամկետ պարտատոմսերը, որոնց թողարկումն իրականացվել է 2020 թվականի հոկտեմբերի 29-ին:

3 և 5 տարի մարման ժամկետով պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի նվազագույն ծավալը, որպես կանոն, 20 մլրդ դրամ է:

10 տարի մարման ժամկետով պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի նվազագույն ծավալը, որպես կանոն, 40 մլրդ դրամ է:

30 տարի մարման ժամկետով պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի առավելագույն ծավալը, որպես կանոն, 20 մլրդ դրամ է:

Պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդների օրացույց

Հունվար 2022							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
1						1	2
2	3	4	5	6	7	8	9
3	10	11	12	13	14	15	16
4	17	18	19	20	21	22	23
5	24	25	26	27	28	29	30
6	31						

Փետրվար 2022							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
6		1	2	3	4	5	6
7	7	8	9	10	11	12	13
8	14	15	16	17	18	19	20
9	21	22	23	24	25	26	27
10	28						

Մարտ 2022							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
10		1	2	3	4	5	6
11	7	8	9	10	11	12	13
12	14	15	16	17	18	19	20
13	21	22	23	24	25	26	27
14	28	29	30	31			

Ապրիլ 2022							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
14					1	2	3
15	4	5	6	7	8	9	10
16	11	12	13	14	15	16	17
17	18	19	20	21	22	23	24
18	25	26	27	28	29	30	

Մայիս 2022							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
18							1
19	2	3	4	5	6	7	8
20	9	10	11	12	13	14	15
21	16	17	18	19	20	21	22
22	23	24	25	26	27	28	29
23	30	31					

Հունիս 2022							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
23			1	2	3	4	5
24	6	7	8	9	10	11	12
25	13	14	15	16	17	18	19
26	20	21	22	23	24	25	26
27	27	28	29	30			

Հուլիս 2022							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
27					1	2	3
28	4	5	6	7	8	9	10
29	11	12	13	14	15	16	17
30	18	19	20	21	22	23	24
31	25	26	27	28	29	30	31

Օգոստոս 2022							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
32	1	2	3	4	5	6	7
33	8	9	10	11	12	13	14
34	15	16	17	18	19	20	21
35	22	23	24	25	26	27	28
36	29	30	31				

Սեպտեմբեր 2022							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
36				1	2	3	4
37	5	6	7	8	9	10	11
38	12	13	14	15	16	17	18
39	19	20	21	22	23	24	25
40	26	27	28	29	30		

Հոկտեմբեր 2022							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
40						1	2
41	3	4	5	6	7	8	9
42	10	11	12	13	14	15	16
43	17	18	19	20	21	22	23
44	24	25	26	27	28	29	30
45	31						

Նոյեմբեր 2022							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
45		1	2	3	4	5	6
46	7	8	9	10	11	12	13
47	14	15	16	17	18	19	20
48	21	22	23	24	25	26	27
49	28	29	30				

Դեկտեմբեր 2022							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
49				1	2	3	4
50	5	6	7	8	9	10	11
51	12	13	14	15	16	17	18
52	19	20	21	22	23	24	25
53	26	27	28	29	30	31	

Պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսեր

Պետական գանձապետական միջնաժամկետ պարտատոմսեր

Պետական գանձապետական երկարաժամկետ պարտատոմսեր

Աճուրդների կողմնորոշիչ ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի եռամսյակային կտրվածքով, յուրաքանչյուր եռամսյակից 10 օր առաջ:

Յուրաքանչյուր աճուրդին տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալների (միջակայքի) և ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի աճուրդի ամսաթվին նախորդող ամսվա վերջին տասնօրյակում՝ գործակալների հետ խորհրդակցելուց հետո:

Կարող են իրականացվել պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի լրացուցիչ թողարկումներ, ընդ որում մինչև 3 շաբաթ մարման ժամկետայնությամբ թողարկումներ կարող են իրականացվել կանխիկ հոսքերի կառավարման նպատակով, իսկ 3-12 շաբաթ մարման ժամկետայնությամբ թողարկումներ՝ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման շրջանակներում:

Ապրիլի 29-ը և հոկտեմբերի 29-ը, որոնց վրա կենտրոնացված են արժեկտրոնային պարտատոմսերի տոկոսավճարներն ու մարումները, հանդիսանում են աճուրդների պահուստային օրեր:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, բացառիկ դեպքերում, ելնելով փոխառության կարիքից և շուկայի միտումներից կարող է հայտարարել լրացուցիչ աճուրդի օրեր, չեղարկել աճուրդի օրերը:

2022 թվականի ընթացքում, ըստ անհրաժեշտության, կիրականացվեն նաև պետական գանձապետական պարտատոմսերի հետգնումներ: 2022 թվականի ընթացքում պարտատոմսերի հետգնումների 70-80%-ը կիրականացվեն մարման գրաֆիկի հարթեցման, իսկ 20-30%-ը՝ պարտատոմսերի իրացվելիությունը խթանելու նպատակով: Որպես կանոն, պետական գանձապետական պարտատոմսերի հետգնումները կիրականացվեն միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխումների օրերին: ՀՀ ֆինանսների նախարարությունը յուրաքանչյուր թողարկման պարտատոմսերի տեղաբաշխման ժամանակահատվածում այդ պարտատոմսերի հետգնում չի իրականացնի:

ՀՀ ֆինանսների նախարարության www.minfin.am պաշտոնական կայքում եռամսյակային կտրվածքով, յուրաքանչյուր եռամսյակից 10 օր առաջ, կհրապարակվի ուղենշային համարվող պարտատոմսերի ցանկը:

Յուրաքանչյուր ամսվա նախավերջին հինգշաբթի օրը կկազմակերպվի հանդիպում գործակալների հետ: Յուրաքանչյուր եռամսյակի նախավերջին չորեքշաբթի օրը կկազմակերպվի հանդիպում պետական պարտատոմսերի շուկայի այլ ինստիտուցիոնալ մասնակիցների հետ:

COVID 19 համավարակով պայմանավորված հետաձգվեց պետական գանձապետական պարտատոմսերի փոխանակման աճուրդային համակարգի ներդրումը 2021 թվականին: Այն նախատեսվում է իրականացնել 2022 թվականին:

2022 թվականին նախատեսվում է աճուրդի մասնակիցների կողմից ներկայացվող հայտերում դրանց բավարարման էական պայման հանդիսացող պարտատոմսերի տարեկան եկամտաբերության փոխարեն կիրառել 100 միավորի դիմաց գինը:

3.2. Պակասուրդի ֆինանսավորումն արտաքին վարկերով (մասհանումների ծրագիր)

ՀՀ 2022 թվականին պետական բյուջեի պակասուրդը ֆինանսավորելու համար նախատեսվում է արտաքին վարկերի գծով կատարել 227.8 մլրդ դրամի (477 մլն ԱՄՆ դոլար) մասհանումներ[2]: Ընդ որում մասհանումներից 132.3 մլրդ դրամը (277 մլն ԱՄՆ դոլար) նախատեսվում է կատարել նպատակային վարկային ծրագրերի գծով, իսկ մնացած 95.5 մլրդ դրամը (200 մլն ԱՄՆ դոլար)՝ բյուջետային աջակցության վարկերի գծով:

2022 թվականի համար ծրագրավորված մասհանումների 46.9%-ի աղբյուրները ենթակա են հստակեցման (ընդ որում 41.9%-ը կազմում են բյուջետային աջակցության վարկերը), 12.0%-ը՝ Ասիական Զարգացման Բանկի վարկերի գծով, 11.4%-ը՝ Համաշխարհային Բանկի (ՎԶՄԲ և ԶՄԸ) վարկերի գծով և 10.3%-ը՝ գերմանական վարկերի գծով: Ըստ վարկատուների մասհանումների կառուցվածքը հետևյալն է.

Մասհանումների կառուցվածքն ըստ վարկատուների (%)



[2] Արտաքին վարկերի գծով պակասուրդի ֆինանսավորման և արտաքին վարկերից մասհանումների տարբերությունը պայմանավորված է համապատասխան վարկային ծրագրերի շրջանակներում բացված հատուկ հաշիվներում առկա դրամական միջոցների մնացորդներով:

Ընդհանուր առմամբ, ըստ ոլորտների մասհանումների կառուցվածքը կլինի հետևյալը.

Մասհանումների կառուցվածքն ըստ ոլորտների (մլն ԱՄՆ դոլար)



2022 թվականին մասհանումների գերակշիռ մասը (64.1%) կկատարվի ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի գծով:

Մասհանումների կառուցվածքն ըստ տոկոսադրույքի տեսակի (%)



Մասհանումների կառուցվածքն ըստ վարկի արժույթի (%)



3.3 Պակասուրդի ֆինանսավորումը կապիտալի միջազգային շուկաներից ներգրավված փոխառություններով

2022 թվականին կապիտալի միջազգային շուկաներից ՀՀ անունից նոր պարտատոմսերի թողարկումներ և շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի հետգնումներ չեն նախատեսվում:

4. Կառավարության պարտքի մարումը և սպասարկումը

2022 թվականին կառավարության պարտքի մարման և սպասարկման համար կպահանջվի 505.3 մլրդ դրամ, որից 291.5 մլրդ դրամը կկազմեն պարտքի գծով մարումները, իսկ 213.8 մլրդ դրամը՝ տոկոսավճարները:

մլրդ դրամ	մարում	սպասարկում	**ընդամենը**
Պետական գանձապետական պարտատոմսեր	170.0[3]	131.8	**301.8**
Արտարժութային պետական պարտատոմսեր	-	41.0	**41.0**
Արտաքին վարկեր	121.5	41.1	**162.5**
Ընդամենը	***291.5***	***213.8***	***505.3***

Սպասարկման ծախսերի կառուցվածքը (%)



ՀՀ կառավարության արտարժութային պարտքի սպասարկման և մարման համար նախատեսված միջոցները փոխարկվել են ՀՀ դրամի հիմք ընդունելով 2021թ. նոյեմբերի 1-ի դրությամբ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքները (կիրառելով համապատասխան ճշգրտման գործակից, քանի որ փաստացի վճարումները կատարվելու են գործարքի օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված վաճառքի փոխարժեքներով) և այն ենթադրությամբ, որ ԱՄՆ դոլարի 6-ամսյա LIBOR-ի դրույքաչափը 2022 թվականին միջին հաշվով կկազմի 1.0%, 6-ամսյա EURIBOR-ը՝ չի գերազանցի զրոյական մակարդակը, իսկ SDR-ի տոկոսադրույքը՝ 1.2%:

2022 թվականին կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույքը կկազմի 5.1%: Կառավարության պարտքի սպասարկման ծախսերը (տոկոսավճարներ) կկազմեն ՀՆԱ-ի 2.7%-ը:

	2020թ.	2021թ.	2022թ.
Կառավարության պարտքի սպասարկում (տոկոսավճար), մլրդ դրամ	164.7	181.5	213.8
%-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	*2.7*	*2.6*	*2.7*
Կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույք, %	4.3	4.7	5.1

Պետական գանձապետական պարտատոմսերի մարման համար նախատեսված 170 մլրդ դրամի մեջ 30 մլրդ դրամը կազմում է պարտատոմսերի հետգնումների համար ծրագրավորված գումարը:

[3] Ցուցանիշը ներառում է պետական գանձապետական պարտատոմսերի հետգնման համար նախատեսված 30 մլրդ դրամը:

Արտաքին վարկերի մարման և սպասարկման գծով նախատեսվում է վճարել 162.5 մլրդ դրամ (340.5 մլն ԱՄՆ դոլար): Նախատեսվող վճարումների կառուցվածքն ըստ վարկատուների հետևյալն է.

մլն ԱՄՆ դոլար	տոկոսավճար	մարում	ընդամենը
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ	18.1	16.5	34.7
Զարգացման Միջազգային Ընկերակցություն	9.1	74.6	83.8
Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	1.0	4.6	5.7
Եվրոպական Ներդրումային Բանկ	2.2	5.7	7.9
Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամ	0.6	4.0	4.6
ՕՊԵԿ-ի Միջազգային Զարգացման Հիմնադրամ	1.8	5.1	6.9
Ասիական Զարգացման Բանկ	16.3	49.4	65.7
Եվրամիություն	2.6	-	2.6
Արժույթի Միջազգային Հիմնադրամ	5.3	5.6	10.9
Եվրասիական Զարգացման Բանկ	7.3	0.6	7.9
Գերմանիա (ՎՎԲ)	6.1	26.2	32.4
Ռուսաստանի Դաշնություն	10.8	38.6	49.4
Ֆրանսիա	1.9	6.8	8.7
ԱՄՆ	0.2	1.8	2.0
Ճապոնիա	1.7	10.2	11.9
Աբու-Դաբիի Զարգացման Հիմնադրամ	0.1	0.6	0.8
Չինաստանի Արտահանման-Ներմուծման Բանկ	0.4	1.7	2.1
ԿԲՍ Բանկ (Բելգիա)	0.0	0.6	0.6
Ռայֆայզն Բանկ (Ավստրիա)	0.1	1.0	1.1
Էռստե Բանկ (Ավստրիա)	0.1	0.7	0.8
Ենթակա է հստակեցման	0.1	-	0.1
Ընդամենը	**86.1**	**254.4**	**340.5**

Արտարժութային պետական պարտատոմսերի սպասարկման ծախսերը 2022 թվականին կկազմեն 85.8 մլն ԱՄՆ դոլար՝ շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի գծով արժեկտրոնային վճարումների համար:

5. Կառավարության պարտքը 2022 թվականի տարեվերջին

ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումների համաձայն՝ 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կառավարության պարտքը կկազմի 4,741 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 60.2 տոկոսը և 2021 թվականի տարեվերջի համեմատությամբ ՀՆԱ-ի նկատմամբ կնվազի 0.6 տոկոսային կետով: Նշենք, որ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նշված

կանխատեսումները տարբերվում են ռազմավարական ծրագրով սահմանված ցուցանիշներից, որը պայմանավորված է կիրառված մակրոտնտեսական ու հարկաբյուջետային շրջանակների, փոխարժեքների տարբերություններով ու կառավարության պարտքի գծով գործառնություններով:

	առ 31.12.2020թ.	առ 31.12.2021թ.	առ 31.12.2022թ.
ՀՀ կառավարության պարտք, մլրդ դրամ	**3,924**	**4,275**	**4,741**
ՀՀ կառավարության պարտք, % ՀՆԱ-ում	**63.5**	**60.8**	**60.2**

Նախատեսվում է 2021-2022 թվականներին կառավարության պարտքի կառուցվածքում ավելացնել ՀՀ դրամով տեղաբաշխվող գանձապետական պարտատոմսերի կշիռը՝ համապատասխանաբար 3.8 և 2.8 տոկոսային կետով: Կառավարության պարտքը կունենա հետևյալ կառուցվածքը.









	առ 31.12.2020թ.	առ 31.12.2021թ.	առ 31.12.2022թ.
Կառուցվածքն ըստ ռեզիդենտության, մլրդ դրամ*			
ներքին պարտք	998	1,239	1,493
արտաքին պարտք	2,926	3,036	3,248
Կառուցվածքն ըստ գործիքակազմի, մլրդ դրամ			
արտաքին վարկեր և փոխառություններ	2,438	2,204	2,384
պետական գանձապետական պարտատոմսեր	959	1,209	1,472
արտարժութային պետական պարտատոմսեր	523	854	879
արտաքին երաշխիքներ	4	4	4
ներքին երաշխիքներ	-	5	3
Արժութային կառուցվածքը, մլրդ դրամ			
ՀՀ դրամով ներգրավված պարտք	959	1,213	1,474
արտարժույթով ներգրավված պարտք	2,965	3,062	3,266
Կառուցվածքն ըստ տոկոսադրույքի տեսակի, մլրդ դրամ			
լողացող տոկոսադրույքով	769	734	812
ֆիքսված տոկոսադրույքով	3,155	3,541	3,929

* 2021 և 2022 թվականների համար պետական գանձապետական և արտարժութային պարտատոմսերի գծով պարտքի մնացորդը բաշխվել է ըստ ռեզիդենտության հիմք ընդունելով 2021թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ փաստացի ձևավորված տեսակարար կշիռները:

Հաշվի առնելով ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումները և պարտքի գծով ծրագրավորված գործառնությունները, ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2022-2024 թվականների ռազմավարական ծրագրով ամրագրված ուղենշային ցուցանիշները կկազմեն.

	Ուղենիշ	2020թ. (փաստ)	2021թ. (կանխ)	2022թ. (կանխ)
Վերաֆինանսավորման ռիսկ				
Մինչև մարում միջին ժամկետը	8 – 11 տարի	8.8 տարի	8.5 տարի	8 տարի
Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտա-տոմսերի (ՊԳՊ) առավելագույն կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին)	առավե-լագույնը 20%	11.5%	10.7%	10.3%
Տոկոսադրույքի ռիսկ				
Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 80%	80.4%	82.8%	82.9%
Փոխարժեքի ռիսկ				
Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 25%	25.4%	29.0%	31.5%
ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 25%	24.4%	28.4%	31.1%

2022 թվականի տարեվերջի դրությամբ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի 35.8%-ը բաժին կընկնի Համաշխարհային Բանկին (Զարգացման Միջազգային Ընկերակցություն ու Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ): Կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքն ըստ վարկատուների կլինի հետևյալը.



2022 թվականի տարեվերջի դրությամբ ձևավորվող կառավարության պարտքի մարման ժամանակացույցը սփռված կլինի մինչև 2054 թվականը և կունենա հետևյալ տեսքը.